II

ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ
(Ազգագրական քննության փորձ)

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայաստանի անկախացման շրջանում սկսված ու այսօր էլ շարունակվող արտագաղթը լուրջ ուշադրության և համակողմանի վերլուծության կարիք ունի: 2000-ականների սկզբից մշակութաբանների, սոցիոլոգների կողմից խնդիրն ուսումնասիրելու, արտագաղթի պատճառները բացահայտելու փորձեր արվել են[1]: Պատճառների թվում նշվում էր գործազրկությունը, տնտեսական ճգնաժամը, կենսամակարդակի անկումը, աշխատատեղերի կրճատումը: Շեշտվում էր հոգեբանական գործոնը, որն ավելի առաջնային է դարձել մեր օրերում, քանի որ արտագաղթում են նաև ապահովված ընտանիքները: Արտագաղթի շարունակականության հետևանքով գործընթացը տնական ուսումնասիրության կարիք ունի:

Ստորև փորձ է արվում հարցը դիտարկել այլ տեսանկյունից, այն է՝ շոշափել ինչպես Հայաստանից մեկնողների, այնպես էլ մնացողների կարծիքն ու վերաբերմունքը արտագաղթի վերաբերյալ: Նման մոտեցումը կարող է նպաստել առավել խորքային երևույթների բացահայտմանը:

Ուսումնասիրության առարկան Երևանի ներկա բազմաշերտ հասարակությունն է, որը ողջ հանրապետության ընդհանուր պատկերն է ներկայացնում, քանի որ Երևանում է կենտրոնացել աշխատանքի որոնումներով տարբեր մարզերից եկած բնակչության որոշակի թվաքանակ: Վերջիններս արտերկիր մեկնելու հնարավորություն չունեն և հույս ունեն, որ գոնե Երևանում կկարողանան ինչ-որ կերպ հանապազօրյա հաց վաստակել: Մարզերից քաղաք տեղափոխվողները հիմնականում տարիներով (եթե ոչ ամբողջ կյանքում) գյուղատնտեսությամբ զբաղված մարդիկ են, որոնք չեն կարող գտնել համապատասխան աշխատանք: Հետևաբար զբաղվում են ինչով պատահի (շինարարություն, վերանորոգումներ և այլն) կամ նրանց կատարած աշխատանքը որակյալ չէ և հեռու է մասնագիտական լինելուց: Ի վերջո, նրանք ևս ծանոթ-

---

[1] *Տե՛ս* Г. А. П о г о с я н. Армянское общество в трансформации. Ереван, 2003; *Հր. Խ ա ռ ա տ յ ա ն. Արտագաղթը Հայաստանից.– Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն, Հազարաշեն, Երևան, 2003:*

բարեկամ-ընկեր կապերի միջոցով արտերկիր մեկնելու ուղիներ են փնտրում:

Ժամանակավոր մեկնողները հաջողության դեպքում մշտական բնակություն են հաստատում որևէ երկրում՝ դրանով իսկ ստվարացնելով արտագաղթողների թիվը: Համեմատություն անցկացնելով խորհրդային տարիներին տեղի ունեցող արտագաղթի հետ, որոնք, ինչպես իրավամբ նշում է Հր. Խառատյանը, ավելի շատ աշխատանքային-սեզոնային միգրացիաներ էին, ինչի միջոցով մեծ ծախսեր պահանջող խնդիրներ էին լուծվում[2], մեր օրերի արտագաղթը նվազագույնը ընտանիքների գոյատևման, առավելագույնը՝ ապագայի ապահովման, և մեկնողների տրամաբանությամբ՝ արժանապատիվ ապրելու նպատակ է հետապնդում:

Ինչպես արդեն նշվեց, արտագաղթում են նաև ունևոր կամ սոցիալապես ապահովված խավի ներկայացուցիչներ: Ուշագրավ է, որ նրանց մեջ գրեթե չկան երկմտողներ: Նրանք գտնում են, որ իրենց համար կան «լավ» կյանքի այլ չափանիշներ, որոնց հնարավոր չէ հասնել Հայաստանում և երբևէ դժվար թե հնարավոր լինի: Բերված փաստարկների շարքում նշվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իշխանությունների վարած ներքին քաղաքականությունը, և իբրև հետևանք՝ գավառական սահմանափակվածությունը, երկրի կտրվածությունն ու աշխարհաքաղաքական անջրպետվածությունը, մշակութային և ինտելեկտուալ անկումը: Արտագաղթողների այս շերտն իրենց երեխաների և ընդհանրապես աճող սերնդի ապագան տեսնում են արտերկրում, մասնավորապես՝ եվրոպական երկրներում: Այդպես են մտածում հատկապես եվրոպական ուսումնական հաստատություններում սովորած և լեզվական խոչընդոտ չունեցող երեխաների ծնողները: Այս առումով շատ դժվար է հասարակության չունևոր և ցածր խավի համար, որը վատ է տիրապետում նույնիսկ ռուսերենին[3], ինչի պատճառով էլ ստիպված է գնալ ցածր վարձատրվող կամ պատահական աշխատանքի: Լեզուների չիմացությունը մեծ դժվարություններ է ստեղծում եվրոպական երկրներ արտագաղթածների համար, որոնք հայտնվում են կղզիացած վիճակում, հասարա-

---

[2] *Նույն տեղում: Եթե հիշենք 1970-ականների արտագաղթը, երբ հասարակությունը մեկնողին դավաճան, ապերախտ, ուրացող անվանումներն էր տալիս, ապա պարզ կդառնա, թե որքան և ինչպես է փոխվել հասարակության կարծիքը արտագաղթի հանդեպ:*

[3] *Դեռևս 1990-ականների սկզբներին ռուսերենի նկատմամբ ձևավորված մերժողական վերաբերմունքը և մեր օրերում էլ շարունակվող ռուսաց լեզվի թույլ դասավանդումը հանրակրթական դպրոցներում հանգեցրեց այն բանին, որ ներկա սերունդը չի տիրապետում կամ վատ է տիրապետում այդ լեզվին, որը միակն է ԱՊՀ տարածքում բնակվողների շփման համար:*

կությունից կտրված ու առանց աշխատանքի: Նրանցից շատերը Հայաստանում վաճառել են իրենց տները, դրանով իսկ իրենց հետևից այրելով կամուրջները՝ բացառելով վերադարձի հնարավորությունը:

Նկատենք, որ հենց այս խավի ներսում են նրանք, ովքեր իրենց իսկ խոսքերով արտագաղթում են հարկադրված, «սրտի ցավով»՝ կտրվելով հարազատ հող ու ջրից և վստահ չլինելով, որ բախտն իրենց կժպտա արտերկրում: Հաճախ կարելի է լսել հետևյալ արտահայտությունը. «ընչի՞ պտի նենց ըլնի, որ մարդ խաղաղ ժամանակ թողնի իրա երկիրը, տունն ու տեղը ու քոչի ուրիշ տեղեր»: Ասվածից հետևում է, որ երկիրը մերժելու հոգեբանության խնդիր չէ, այլ, խորը հիասթափությունն այդ նույն երկրից, քանզի չարդարացան Հայաստանի անկախացման հետ կապված սպասումները: Հասարակության տարբեր շերտերում, հատկապես միջին և ավագ տարիքային խմբերում նկատվում են ափսոսանքի ու կարոտախտի նշաններ՝ անցած տարիների (խորհրդային շրջանի) նկատմամբ:

Արտագաղթի հանդեպ վերաբերմունքը միանշանակ չէ տարիքային տարբեր խմբերում: Այսպես, միջին և բարձր դպրոցական տարիքի խմբերում արտագաղթի վերաբերյալ ինքնուրույն կողմնորոշում չկա, քանի որ որոշողներն ու իրենց ճակատագիրը տնօրինողը ծնողներն են: Այդ տարիքում խորն է կապվածությունը հարազատ միջավայրի, ընկերների հետ, ուստի և բաժանումը հաճախ հոգեբանական խնդիրներ է առաջացնում: Ուսանողական տարիքը բնորոշվում է որպես երազանքների ու խիզախումների շրջան, և երիտասարդությունը մեծ մասամբ ինքնուրույն է կողմնորոշվում: Ուշագրավ է, որ վերջիններս երկրից հեռանալը չեն դիտում որպես արտագաղթ, այլ դա համարում են ժամանակավոր երևույթ՝ ուսումը դրսում շարունակելու կամ փող վաստակելու միջոց, հետևաբար և ցավոտ չի ընկալում երկրից հեռանալը: Երիտասարդ սերնդի մեջ կա և՛ հայրենասիրական զգացումներին խորապես տուրք տվող, և՛ արտագաղթը միանշանակ մերժող տրամադրվածություն, երբ ասում են. «որ սաղս գնանք, բա էս հողերն ո՞ւմ ենք թողնելու»: Սա նաև հեղափոխականորեն *տրամադրված երիտասարդությունն է, որը հավատում է, որ ինքը կարող է և պատրաստ է որևէ բան փոխել երկրում: Նորակազմ ընտանիքներում, սակայն, բարդ իրավիճակ է ստեղծվում երիտասարդների համար, քանի որ նրանք կանգնում են երկընտրանքի առջև. հավատարիմ մնալ արտագաղթը մերժելու և երկիրը չլքելու սկզբունքին ու փորձել դիմագրավել կամ հեռանալ երկրից՝ ընտանիքն ապահովելու նպատակով: Այս պարագայում հաճախ մեկնում է ամուսինը՝ անորոշ ժամանակով կամ ընտանիքները քայքայվում են՝ արտագաղթած երկրում երկրորդ ընտանիքը ստեղծելու հետևանքով:*

Միջին տարիքային խմբի սոցիալական տարբեր խավերում երկակի վերաբերմունք է դրսևորվում արտագաղթի հանդեպ: Նրանք, ովքեր հետևում են երիտասարդներին և որոշում են ընտանիքով մեկնել, հարցը լուծում են միանշանակ՝ ասելով. «Էս էլ ապրելու տեղ չի» կամ «ստեղ էլ ապրելու ճար չկա»: Իսկ նրանք, ովքեր դեմ չեն կամ չեն կարող առարկել երիտասարդների հեռանալու որոշմանը, գերադասում են մնալ տեղում, քանի որ իրենք արդեն սերտաճել են այս հողին և չեն ուզում հեռանալ: Քիչ չեն նաև նրանք, ովքեր դեռևս հույս ունեն, որ «Էս երկրում էլ մի օր արև կբացվի»:

Ավելի բարձր տարիքային խմբեր փոքր-ինչ փիլիսոփայորեն են նայում հարցին, ասելով, թե հային հաճախ է վիճակվել թողնել իր հայրենիքը, սակայն նա նորից վերադարձել է ու շենացրել երկիրը: Ոմանք էլ, հիշելով Մեծ եղեռնը, ասում են, որ այն տարիներին թվում էր, թե □մարդու հայ տեսակը վերացավ, բայց արի ու տես, որ մնաց, շատացավ ու երկիր ստեղծեց, էս էլ կանցնի, ժամանակ ա պետք□: Երևի այս լավատեսությունն է պահել հային առ այսօր՝ ի հեճուկս նրան բաժին ընկած պատմական ճակատագրի:

Ցավալի է, որ երկրի մտավորականությունը, ինքնամեկուսացել է, հայեցողի դիրք գրավել՝ ներքուստ միայն ցավ ապրելով այն ամենի համար, ինչ տեղի է ունենում, և, երևի թե, ընդունելով որևէ բան փոխելու իր անկարողությունը:

Երկրում մնացողների սոցիալ-տարիքային տարբեր խմբերում նույնպես միանշանակ չէ վերաբերմունքը արտագաղթի հանդեպ և վերջինիս ընկալումը: Մի մասը բռունցքները սեղմած մնում են տեղում, ասելով, թե ինչ էլ լինի իրենք չեն հեռանա երկրից: Շատերը զայրանում են, թե ինչու պիտի ստեղծվեին այնպիսի պայմաններ, որ արտագաղթի խնդիր առաջանար: Քիչ չեն անտարբերներն ու համակերպվածները, որոնք նայում են կողքից և արդեն ընդունակ չեն որևէ գործողության: Սա, թերևս, ամենավտանգավորն է հասարակության համար, քանի որ այս անտարբեր զանգվածը դառնում է հեշտ կառավարելի: Նման մթնոլորտում է ստեղծվել դառը հումորով ասվող այն արտահայտությունը, թե «վերջին գնացողը թող օդանավակայանում հանգցնի լույսը»:

Մնացողների մեջ որոշակի շերտ կա, որը մեկնողներին մեղադրում է հայրենասիրական զգացմունքների բացակայության մեջ: Հանդիպում են նաև արտագաղթն արդարացնող կարծիքներ. «Բա սա ապրելու տեղ ա՞, բա սա երկիր ա՞, մնան ի՞նչ անեն, սովից մեռնե՞ն» և այլն:

Երկրում մնացողների մեջ կան այնպիսիք, որոնք նախանձով են նայում մեկնողին և ճանապարհելիս ասում են. «Ձեռքդ դիր գլխիս»՝ վերջինիս հաջորդելու ակնկալիքով: Այսօր հաճախ կարելի է շնորհա-

վորանքի խոսքեր լսել նրանց հասցեին, ովքեր արդեն մշտապես արտերկիր մեկնելու տոմս ունեն ձեռքին:

Այս ամենի կողքին՝ երկրի իշխանությունների անխոով ու անտարբեր կեցվածքը զայրացնում է բոլորին՝ խորացնելով ժողովուրդ – իշխանություններ հակադրությունը:

Ժողովրդի կարծիքով՝ իշխանությունները չեն ձգտում որևէ բան ձեռնարկել, ինչը դրական ազդեցություն կունենա արտագաղթը կասեցնելու հարցում, մինչդեռ շարունակվող արտագաղթն առաջին հերթին ազգային անվտանգության խնդիր է, ինչը հասկանում է յուրաքանչյուր շարքային քաղաքացի:

ЭМИГРАЦИЯ В НАШИ ДНИ
(Попытка этнографического исследования)

АРМЕНУИ СТЕПАНЯН

Р е з ю м е

Продолжающаяся эмиграция из Армении, в частности, из Еревана на нынешнем этапе нуждается в разностороннем анализе.

– Среди групп старшеклассников и лиц студенческого возраста идея эмиграции не столь распространена, так как у них здесь друзья, знакомая среда. Но если родители примут решение о выезде, то они вынужденно присоединятся к ним.

– В группе студенческой молодежи отмечается мечта выехать за границу с целью учебы или удачного брака с условием вернуться назад, но это не рассматривается ими как эмиграция.

– Среди молодежи отмечается и противоположный подход – однозначное исключение идеи эмиграции, с вопросом-мотивацией: «Кому мы оставим страну?».

– Среди молодых людей, которые только что создали семью, озабоченность по поводу выживания и обеспечения достойной жизни увеличивается. Полный отрыв от страны они считают неправильным, но в трудовой эмиграции или во временном отсутствии не видят ничего предосудительного.

– Мнение людей средневозрастной группы по данному вопросу неоднозначно; эмигрирующие находят себе оправдание (безработица, низкий уровень жизни). Больше акцентируется психологический фактор (разочарование, крушение надежд, неспособность что-либо изменить, отсутствие перспективы и т. п.). Те, кто остаются, винят эмигрирующих в отсутствии патриотических чувств. Иные оправдывают выезжающих: «Что делать, не умирать же с голоду?». Есть и другие мнения.

– В старших возрастных группах существует философское понимание вопроса: армянам часто приходилось оставлять родину, но они возвращались, и страна вновь процветала.

– Интеллигенция, будучи не в состоянии что-либо изменить, самоизолировалась.

В создавшейся ситуации все однозначно обвиняют власти, которые заняли в этом вопросе безразличную позицию. В итоге углубляется разрыв связи народ– власти.

EMIGRATION NOWADAYS
(An attempt of ethnographical study)

ARMENUHI STEPANYAN

S u m m a r y

The first stage of the recent emigration wave from Armenia needs a multidimensional and thorough research.

– The intention to emigrate among the high school students is low, as they have friends here, but, if their parents decide to leave, the children will obey;

– Among the age group of students, there is a high hope to study or successfully marry abroad and then return to homeland. Such students do not consider such plans as emigration;

– Among the young people one can find also those who are definitely against any form of emigration because they ask, “Whom are we safekeeping the Motherland to?”;

– For the young families the dream of a prosperous life remains somewhat elusive and worrying. These young couples do not consider permanent emigration to be the right choice but temporary relocation for job hunting is not considered as emigration;

– Among the middle age groups, the idea of emigration is not uniform. Those who emigrate, resort to all kinds of excuses to justify their move. Typically they sight lack of employment opportunities and harsh living conditions. Psychological factors such as hopelessness and inability to change anything are more accentuated. Those, who stay, blame the emigrants in the absence of patriatic feelings. Some justify them, saying: “What to do, mustn’t they die of hunger”. There are also other opinions.

– The older generation has a philosophical approach towards the emigration issue. They say that Armenians historically have always been forced to emigrate, but they have always repatriated and have rebuilt their homeland;

– The intellectual class has turned towards self isolation due to its inability to bring about any real change.

In general, everyone is blaming the government, as it has taken an indifferent position in this question. As a result, the mistrust between the people and the government deepens.